

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Տարեկան հաշվետվություն

ԵՐԱՆԻ «ՇԱՄՊԱՅՆ ԳԻՆԻՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ք.Երևան, Թբիլիսյան խճուղի 20, հեռ. 28 – 54 – 76, ֆաքս 28 – 54 – 68

էլ. փոստ info@armchampagne.am

N 03 27.04.2011թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ հասարակ, անվանական

արժեթղթերի քանակը՝ 222183 հատ

արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ 4000 ՀՀ դրամ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել հաշվետվության ամբողջականությունը»:

ստորագրող անձինք՝

<u>Յ. Իսկաջյան</u> (անուն, ազգանուն)	<u>Գլխավոր հաշվապահ</u> (պաշտոն)	_____	<u>27.04.2011թ.</u> (ամսաթիվ)
<u>Գ. Մինասյան</u> (անուն, ազգանուն)	<u>Փոխտնօրեն</u> (պաշտոն)	_____	<u>27.04.2011թ.</u> (ամսաթիվ)
<u>Ս. Հակոբյան</u> (անուն, ազգանուն)	<u>Իրավախորհրդատու</u> (պաշտոն)	_____	<u>27.04.2011թ.</u> (ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում են (ստորագրությունները վավերացվում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի, կամ նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից)՝

<u>Ֆ. Հակոբյան</u> (անուն, ազգանուն)	<u>Գործադիր տնօրեն</u> (պաշտոն)	_____	<u>27.04.2011թ.</u> (ամսաթիվ)
---	------------------------------------	-------	----------------------------------

Կ.Տ.

Հասցե Երևան, Գր. Լուսավորչի 15/1
Հեռ. (374-10) 58-07-45
Ֆաքս (374-10) 52-69-41
Էլ. փոստ hayaudit@hayaudit.com
URL: www.hayaudit.com

Address 15/1 Gr. Lusavorchi str., Yerevan
Phone (374-10) 58-07-45
Fax (374-10) 52-69-41
E-mail: hayaudit@hayaudit.com
URL: www.hayaudit.com

04 N 2-01

« 01 » 04 2011թ.

Ա ՈՒ Դ Ի Տ ՈՐ Ա Կ Ա Ն Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ բաժնետերերի ժողովին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) հաշվապահական հաշվեկշիռը՝ առ 31-ը դեկտեմբեր 2010թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները (այսուհետև՝ ֆինանսական հաշվետվություններ):

Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է Ընկերության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրեցինք Հայաստանի Հանրապետության աուդիտի ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են թեստային հիմունքներով այն ապացույցների հետազոտումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը և բացահայտումները: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների գնահատումը, Ընկերության ղեկավարության կողմից կատարված էական արժեքների գնահատումների հետազոտումը և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

«Հայաուդիտ» ՍՊԸ  “Hayaudit” LLC

Աուդիտորական գործունեության արտոնագիր N 004
Auditing activities license N 004

1. Մենք չենք հետևել Ընկերության 2010 թվականի տարեկան ապրանքանյութական արժեքների մնացորդների գույքագրման գործընթացին, քանի որ գույքագրումը կատարվել է մինչև աուդիտի անցկացումը: Ապրանքանյութական արժեքների առանձնահատուկ բնույթի պատճառով աուդիտի իրականացման ընթացքում մեր կողմից գույքագրում չի իրականացվել:

2. Շահագործման մեջ գտնվող և օգտագործվող 746453.0 հազ.դրամ սկզբնական արժեք ունեցող հիմնական միջոցներից 169226.0 հազ.դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցները կամ 22 տոկոսը հաշվեկշռային արժեք չունեն:

3. Ընկերությունում առկա դեբիտորական պարտքերի մնացորդից փոխադարձ ակտերով հաստատված չեն 25090.0 հազ. դրամ մնացորդը կամ 8.6 տոկոսը:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները, բացի վերը նշված հանգամանքի հնարավոր հետևանքներից, բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը՝ առ 31-ը դեկտեմբերի 2010թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքները, սեփական կապիտալում փոփոխություններն ու դրամական հոսքերը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների:



Հ. Գրիգորյան

Մ. Ստեփանյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ – ի Գործադիր տնօրեն՝ Ֆիամետա Հակոբյանը, Գլխավոր հաշվապահ՝ Հովհաննես Իսկաջյանը, փոխտնօրեն՝ Գագիկ Մինասյանը, Իրավախորհրդատու՝ Սերգեյ Հակոբյանը սույնով հայտարարում ենք այն մասին, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Ընկերության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել է կամ առնչվում է ընկերությունը:

Գործադիր տնօրեն

Ֆիամետա Հակոբյան

Գլխավոր հաշվապահ

Հովհաննես Իսկաջյան

Փոխտնօրեն

Գագիկ Մինասյան

Իրավախորհրդատու

Սերգեյ Հակոբյան

Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ
Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

1. Հաշվապահական հաշվառումը տարվում է մենորիալ – օրդերային եղանակով, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաստատված հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջներին և կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեությանը համապատասխան:

2. Ֆինանսական հաշվետվությունները կազմվում են հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան:

3. Պաշարներ.

Պաշարների կազմում հաշվառվում են այն ապրանքնյութական արժեքները, որոնք.

ա/ պահվում են սովորական /ամենօրյա/ գործունեության ընթացքում վաճառքի համար,

բ/ արտադրության ընթացքում են՝ այդպիսի վաճառքի համար,

գ/ արտահայտված են նյութերի և արագամաշ առարկաների ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայություններ մատուցելու ընթացքում օգտագործելու համար:

Պաշարներն ընդգրկում են.

- ապրանքները, ներառյալ կազմակերպությունների կողմից գնված և վերավաճառքի համար պահված հողը /հողամասերը/ և այլ ունեցվածքը,
- պատրաստի արտադրանքը,
- անավարտ արտադրությունը,
- նյութերը և օժանդակ միջոցները, որոնք պետք է օգտագործվեն արտադրության ընթացքում,
- արագամաշ առարկաները:

Պաշարները՝

- մուտքագրվում են ձեռք բերման արժեքով (գնման գին + ձեռք բերման հետ կապված տրանսպորտային , բեռնման , բեռնաթափման և այլ ծախսումներ),
- ինքնարժեքը ձևավորվում է ձեռք բերման արժեքով և վերամշակման հետ կապված բոլոր ծախսումներով , ինչպես նաև պաշարները վիճակի բերելու հետ կապված այլ ծախսեր,
- ինքնարժեքը, ձևավորման ընթացքում, ելքագրվում է ԱՄԱԵ (ՖԻՖՈ) , ՎՄԱԵ (ԼԻՖՈ) և միջին կշռված արժեքի բանաձևերով, ելնելով արտադրության անհրաժեշտությունից,

- իրացված պատրաստի արտադրանքի ինքնարժեքի հաշվարկը կատարվում է միջինացված եղանակով,
- պաշարների արժեքի փոփոխությունը կատարվում է ըստ տեսակների,
- որպես ծախս ճանաչվում են պաշարների ինքնարժեքը , պաշարների կորուստները, գերնորմատիվային ծախսումները, տեխնոլոգիական գործընթացով չնախատեսված պահպանման ծախսումները, վարչական վերադիր ծախսումները, վաճառքի (կոմերցիոն) ծախսումները,
- պաշարներն իրացվում են շուկայական գներից համապատասխան,
- արագամաշ առարկաների արժեքը դուրս է գրվում շահագործման հանձնելու պահին:

4. Պատրաստի արտադրանքի հաշվառումն փաստացի ինքնարժեքով :

5. Հիմնական միջոցների հաշվառման նպատակով սահմանվում է հետևյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը.

ա/ հիմնական միջոցների խմբին են դասվում նյութական այն արժեքները, որոնք

- առկա են կազմակերպությունում արտադրանքի արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, ապրանքների իրացման, վարձակալության տալու կամ վարչական նպատակով օգտագործելու համար,
- նախատեսվում է օգտագործել մեկ տարի և ավելի ժամկետում:

բ/ Հիմնական միջոցները սկզբնապես չափվում են`

- միջոցի ձեռքբերման կամ կառուցման ժամանակ վճարված դրամական միջոցների գումարին, իսկ այլ ձևով հատուցելու դեպքում` հատուցման իրական արժեքին,
- միջոցի ձեռքբերման կամ կառուցման կողմերի համաձայնությամբ որոշված վճարվելիք, վճարված դրամական միջոցների գումարին, իսկ այլ ձևով հետագայում հատուցելու դեպքում` հատուցման իրական արժեքին` միջոցի ձեռքբերման պահի դրությամբ:

գ/ Հիմնական միջոցը ճանաչվում է որպես ակտիվ, երբ

- ակնկալվում է, որ դրա հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն,
- դրա արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

դ/ Հիմնական միջոցները սկզբնական ճանաչումից հետո հաջորդող ժամանակահատվածներում հաշվառվելու են իրենց սկզբնական արժեքով հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

ե/ Հիմնական միջոցները բաժանվում են հետևյալ խմբերի՝

- շենքեր
- կառուցվածքներ
- փոխանցող հարմարանքներ
- մեքենաներ և սարքավորումներ
- տրանսպորտային միջոցներ
- արտադրատնտեսական գույք, գործիքներ
- բազմամյա տնկարկներ
- բանող և մթերատու անասուններ
- այլ հիմնական միջոցներ:

զ/ Հիմնական միջոցների արժեքը պարբերաբար նրա օգտագործման ընթացքում դուրս է գրվում ծախսերով: Հիմնական միջոցների մաշվածության ժամկետները սահմանվում են «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմաներով:

է/ Հիմնական միջոցների վրա կատարած նորոգման ծախսերը կապիտալացվում են, երբ դրանց հետևանքով տեղի է ունենում հիմնական միջոցների արդիականացում, կամ երբ նորոգման ծախսերը գերազանցում են նորոգվող հիմնական միջոցի տարեսկզբի մնացորդային արժեքի 10%-ը: Մնացած ծախսերը ծախսագրվում են:

ը/ Հիմնական միջոցները հաշվառվում են ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից հաստատված հաշվապահական հաշվառման հաշվային պլանով նախատեսված հաշիվներով:

6. Ոչ նյութական ակտիվներ.

ա) գնահատում սկզբնական , ձեռք բերման արժեքով (հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումը) :

բ) ամորտիզացիոն ժամկետը տաս տարի :

7. Ներդրումային գույքի հաշվառում սկզբնական , ձեռք բերման արժեքով (հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումը) :

8. Էական սխալների ընդգրկում ընթացիկ ժամանակաշրջանի զուտ շահույթը կամ վնասը որոշելիս :

9. Արտարժույթի փոխարժեքային տարբերությունների ճանաչումը որպես եկամուտ կամ ծախս :

10. Փոխառության ծախսումները դրանք տոկոսների վճարման և այլ ծախսումներն են, որոնք ընկերությունը կատարում է՝ կապված փոխառու միջոցների ստացման հետ: Փոխառության ծախսումները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում կատարվել են/ՀՀՀՀՍ 23/:

11. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն , հաշվառումը կարգավորող օրենսդրության մեջ փոփոխություններ լինելու դեպքում :

Գործադիր տնօրեն

Ֆ.Ֆ. Հակոբյան

Գլխավոր հաշվապահ

Յ.Ս. Իսկաջյան

Տարեկան զեկույց

2010թ. ընթացքում Ընկերության կողմից իրականացված գործունեության վերաբերյալ

Ձեկուցող Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ – ի Գործադիր տնօրեն Ֆիամետա Ֆրանսիկի Հակոբյան

Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ – ի բաժնետոմսերը դասվում են որպես հասարակ, անվանական բաժնետոմսեր, ներկայումս դրանք ոչ փաստաթղթային ձևի են: Քանակը կազմում է 222183 հատ: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 4000 հայկական դրամ: Բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները և պարտականությունները սահմանվում են Ընկերության կանոնադրությամբ և «Բաժնետիրական Ընկերությունների մասին» ՀՀ օրենքով: Բաժնետոմսերի նկատմամբ իրավունքների և պարտականությունների գրանցումը կատարում է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ – ն:

Կանոնադրական կապիտալի չափը կազմում է 888732000 դրամ: Կանոնադրական կապիտալը 100 տոկոսով ձևավորված է սովորական բաժնետոմսերից, որոնց քանակը կազմում է 222183 հատ: Մասնակիցների կողմից իրենց պատկանող արժեթղթերի դիմաց վճարման պարտավորությունը 100 տոկոսով կատարված է:

Ընկերությունը հիմնականում զբաղվում է ալկոհոլային խմիչքների արտադրությամբ և վաճառքով: Առավել կարևորվում են շամպայն գինիների, օղու և կոնյակների արտադրության ոլորտները, որոնց զարգացման հիմնական ուղղությունները կայանում են նոր տեխնոլոգիաների կիրառման, արդի սարքավորումների ձեռք բերման և օգտագործման մեջ:

Արտադրանքը սպառվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում: Ընկերությունը իր արտադրատեսակներով ներքին շուկայում զբաղեցնում է կայուն դիրք: Իրացումը հիմնականում իրականացվում է Ընկերության ֆիրմային խանութների միջոցով: Արտադրանքի վաճառքը իրականացվում է նաև տարբեր առևտրային կետերին մատակարարելու միջոցով, սակայն դրանցից ոչ մեկը որպես խոշոր սպառող չի դիտվում: Արտաքին շուկայում Ընկերության արտադրանքը հիմնականում սպառվում է Ռուսաստանի Դաշնությունում:

Հիմնական մրցակիցներ են համարվում օղի, գինի, կոնյակ արտադրող ընկերությունները:

Ընկերությունը չունի այնպիսի մատակարարներ, որոնց բաժին է ընկնում ապրանքանյութական արժեքների ընդհանուր մատակարարման 10 տոկոսից ավելին:

Ընկերությունը օժանդակ նյութերի, շրջանառու միջոցների ձեռք բերման համար մշտապես ունի ֆինանսական ներքուքերի կարիք, ուստի այդ պատճառով հաշվետու տարվա ընթացքում Ընկերությունը դիմում – հայտ է ներկայացրել «Յունիբանկ» ՓԲԸ – ին վարկ ստանալու խնդրանքով:

2010թ. ապրիլին Ընկերությունը «Յունիբանկ» ՓԲԸ – ի հետ կնքել է անշարժ գույքի հաջորդող գլխավոր հիփոթեքի պայմանագիր և ըստ դրա վարկային պայմանագիր, գրավադրելով Ընկերության սեփականությունը հանդիսացող ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 20 հասցուում գտնվող բենզալցակայանը իր հողատարածքով: Ըստ վերը նշված պայմանագրի Ընկերությունը 18 ամիս ժամկետով, տարեկան 15 (տասնհինգ) տոկոս տոկոսադրույքով ստացել է 50.000.000 / հիսուն միլիոն/ ՀՀ դրամ վարկ:

2010թ. հունիսի 21 -ին Ընկերությունը «Յունիբանկ» ՓԲԸ – ի հետ կնքել է վարկային պայմանագիր, գրավադրելով Ընկերության սեփականությունը հանդիսացող ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 20 հասցուում գտնվող բենզալցակայանը իր հողատարածքով: Ըստ վերը նշված պայմանագրի Ընկերությունը 12 ամիս ժամկետով, տարեկան 15 (տասնհինգ) տոկոս տոկոսադրույքով ստացել է 20.000.000 / քսան միլիոն/ ՀՀ դրամ վարկ:

Ընկերությունն ունի գործունեության իրականացման համար հատուկ լիցենզիաներ, որոնք տրված են անժամկետ:

Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանում է Կոտայքի մարզ, գյուղ Քանաքեռավանում գտնվող գինու կետը իր շենք - շինություններով և սարքավորումներով:

Թբիլիսյան խճուղի 20 հասցեում գտնվող Ընկերության գործարանի տարածքից որոշակի հատված հինգ տարի ժամկետով անսական 360000 /երեք հարյուր վաթսուն հազար/ դրամ արժեքով վարձակալության է հանձնված «Գարանտ սերվիս» ՍՊԸ - ին:

Թբիլիսյան խճուղի 20 հասցեում գտնվող Ընկերության գործարանի տարածքից որոշակի հատված՝ 200 քմ մակերեսով հողատարածք վարձակալությամբ է տրված «Ֆրանսպարկ» ՓԲԸ – ին, անսական 142000 դրամ վարձավճարով, հինգ տարի ժամկետով:

Թբիլիսյան խճուղի 20 հասցեում գտնվող, Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող վառելիքի լիցքավորման կայանը հինգ տարի ժամկետով, անսական 162960 /մեկ հարյուր վաթսուներկու հազար ինը հարյուր վաթսուն/ դրամ արժեքով վարձակալության է հանձնված «Ֆլեշ» ՍՊԸ - ին:

Ընկերությունը վարձակալական հիմունքներով օգտագործում է Ագաթանգեղոսի 7 հասցեում գտնվող տարածքը, որը գործում է որպես ֆիրմային խանութ: Վարձակալության պայմանագիրը կնքված է անորոշ ժամկետով, անսական 60000 /վաթսուն հազար/ դրամ վարձավճարով:

Ընկերությունը անորոշ ժամկետով կնքված անհատույց օգտագործման պայմանագրի շրջանակներում, որպես ֆիրմային խանութ է օգտագործում Մաշտոցի պողոտա 27 հասցեում գտնվող տարածքը:

Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանում են ք. Էջմիածին, Մաշտոցի փողոց թիվ 28 հասցեում գտնվող խանութի և ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 29 հասցեում գտնվող խանութի տարածքները:

Խաղողի մթերման սեզոնային աշխատանքները կազմակերպելու նպատակով Ընկերությունը վարձակալում է Տավուշի մարզ գյուղ Դեբեդավան հասցեում գտնվող «Նոյեմբերյանի գինու գործարան» ՓԲԸ – ին պատկանող գինու կետը տարեկան 5760000 /հինգ միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար/ դրամ վարձավճարով: Վարձակալության պայմանագիրը կնքված է անորոշ ժամկետով: Ընկերությունն իր գործունեության մեջ ունի ներգրավված հողատարածքներ, շենքեր, շինություններ, որոնք մեծամասնությամբ կենտրոնացված են ք. Երևան Թբիլիսյան խճուղի 20 հասցեում:

Տեղեկանք

Շենքեր.

Հաշվեկշռային արժեք - 135353 հազ. դրամ

Մաշվածություն – 52.8 %

Շինություններ.

Հաշվեկշռային արժեք - 3698 հազ. դրամ

Մաշվածություն - 86.0 %

Մեքենաներ և սարքավորումներ.

Հաշվեկշռային արժեք - 32835 հազ. դրամ

Մաշվածություն - 86.9 %

Տրանսպորտային միջոցներ.

Հաշվեկշռային արժեք - 74091 հազ. դրամ

Մաշվածություն – 57.4 %

Արտադրական գույք.

Հաշվեկշռային արժեք - 1650 հազ. դրամ

Մաշվածություն – 69.3 %

Այլ

Հաշվեկշռային արժեք - 4321 հազ. դրամ

Մաշվածություն - 0 %

Ընդամենը Սկզբնական արժեք - 746453 հազ. դրամ

Հաշվեկշռային արժեք - 251948 հազ. դրամ

Մաշվածություն - 66.2 %

Աշխատողների միջին թվաքանակը 2010թ. ընթացքում կազմել է 230 մարդ:

Ընկերության հասարակ անվանական բաժնետոմսերի մոտավորապես երկու ամբողջ չորս տասնորդական տոկոսը պատկանում է Ընկերության աշխատակիցներին:

Ընկերությունը չունի այնպիսի աշխատակիցներ, որոնց տարեկան վարձատրությունը գերազանցում է նվազագույն աշխատավարձի տասնհազարապատիկը:

Ընկերությանը հարկային արտոնություններ տրված չեն:

Ընկերության նկատմամբ հաշվետու տարվա ընթացքում դատարանի կողմից պատասխանատվության միջոցներ չեն կիրառվել:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ԿԱ ՊԵԿ Նախագահի 01.04.10թ. թիվ 1010204 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում ստուգում է իրականացվել բյուջեյի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերաբերյալ: Արդյունքում կազմվել է համապատասխան ակտ, ըստ որի Ընկերությանը ներկայացվել է 5.984.200 (հինգ միլիոն ինը հարյուր ութսունչորս հազար երկու հարյուր) դրամի չափով պետ. բյուջե վճարման պարտավորություն: Գումարը վճարվել է պետ. բյուջե սահմանված ժամկետում:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ԿԱ ՊԵԿ Նախագահի 07.12.10թ. թիվ 1107291 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում ստուգում է իրականացվել ձեռնարկատիրական գործունեության առարկաների գրանցման ճշտության վերաբերյալ: Արդյունքում կազմվել է համապատասխան ակտ, ըստ որի Ընկերությանը ներկայացվել է 1.005.000 (մեկ միլիոն հինգ հազար) դրամի չափով պետ. բյուջե վճարման պարտավորություն: Գումարը վճարվել է պետ. բյուջե սահմանված ժամկետում:

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ պետական այլ իրավասու մարմինների կողմից ստուգումներ չեն իրականացվել: Բոլոր տեսակի հաշվետվությունները Ընկերության կողմից ներկայացվել են գործող օրենսդրությանը համապատասխան և առանց ժամկետների խախտման: Ընկերության հաշվապահական հաշվեկշռում արտացոլված մյուս տույժ-տուգանքների գումարները գոյացել են վճարումների մասնակի ուշացումների հետևանքով:

Ընկերությունը 2010թ. ընթացքում ֆինանսական միջոցներ ներգրավելու նպատակով փոխկապակցված անձանց հետ կատարել է ներքոհիշյալ գործարքները.

29.03.10թ. Ընկերության Դիտորդ խորհրդի նախագահ Հրայր Հակոբյանը անտոկոս փոխառության պայմանագրի հիման վրա Ընկերությանը տրամադրել է 23.460.000 դրամ գումար օժանդակ նյութերի ձեռք բերման համար: Գումարն անհրաժեշտ էր Ընկերությանը օժանդակ նյութերի ձեռք բերման համար:

01.06.10թ. Ընկերության Դիտորդ խորհրդի նախագահ Հրայր Հակոբյանը անտոկոս փոխառության պայմանագրի հիման վրա Ընկերությանը տրամադրել է 6.766.000 դրամ գումար, Ընկերության տնտեսական գործունեությանը օժանդակելու նպատակով՝ օժանդակ նյութերի՝ խցանների, ջերմածածկոցիկների ձեռք բերման համար:

15.06.10թ. Ընկերության Դիտորդ խորհրդի նախագահ Հրայր Հակոբյանը անտոկոս փոխառության պայմանագրի հիման վրա Ընկերությանը տրամադրել է 5.919.350 դրամ գումար, շրջանառու միջոցների համալրման նպատակով:

07.07.10թ. Ընկերության Դիտորդ խորհրդի նախագահ Հրայր Հակոբյանը անտոկոս փոխառության պայմանագրի հիման վրա Ընկերությանը տրամադրել է 9.200.000 դրամ գումար, Ընկերության տնտեսական գործունեությանը օժանդակելու նպատակով՝ օժանդակ նյութերի ձեռք բերման համար:

19.07.10թ. Ընկերության Դիտորդ խորհրդի նախագահ Ջրայր Հակոբյանը անտոկոս փոխառության պայմանագրի հիման վրա Ընկերությանը տրամադրել է 50.000.000 դրամ գումար, շրջանառու միջոցների համալրման նպատակով:

27.07.10թ. Ընկերության Դիտորդ խորհրդի նախագահ Ջրայր Հակոբյանը անտոկոս փոխառության պայմանագրի հիման վրա Ընկերությանը տրամադրել է 3.000.000 դրամ գումար, շրջանառու միջոցների համալրման նպատակով:

23.08.10թ. «Աստղածոր» ՍՊԸ – ն, որը հանդես է գալիս որպես փոխկապակցված անձ, Ընկերությանը անտոկոս փոխառության պայմանագրի հիման վրա տրամադրել է 16.000.000 դրամ գումար, շրջանառու միջոցների համալրման նպատակով:

11.09.10թ. Ընկերության Դիտորդ խորհրդի նախագահ Ջրայր Հակոբյանը անտոկոս փոխառության պայմանագրի հիման վրա Ընկերությանը տրամադրել է 1.560.000 դրամ գումար, շրջանառու միջոցների համալրման նպատակով:

26.11.10թ. Ընկերության Դիտորդ խորհրդի նախագահ Ջրայր Հակոբյանը անտոկոս փոխառության պայմանագրի հիման վրա Ընկերությանը տրամադրել է 10.565.000 դրամ գումար, շրջանառու միջոցների համալրման նպատակով:

Նշված փոխառություններից մի մասը հետ է վերադարձվել Փոխատուներին:

Հաշվեկշռում առկա այլ փոխառության գծով պարտքերը գոյանում են նախկինում կնքված փոխառության գործող պայմանագրերից:

Ընկերության 2010թ. աուդիտն իրականացրել է «Հայաուդիտ » ՍՊԸ – ն, որը գտնվում է ք. Երևան, Գ. Լուսավորչի 15/1 հասցեում: Աուդիտն իրականացնող անձն եկել է այն եզրահանգման, որ շահագործման մեջ գտնվող և օգտագործվող 746453.0 հզ. դրամ սկզբնական արժեք ունեցող հիմնական միջոցներից 169226.0 հզ. դրամի սկզբնական արժեքով հիմնական միջոցները հաշվեկշռային արժեք չունեն: Ինչպես նաև Ընկերության առկա դեբիտորական պարտքերի մնացորդից փոխադարձ ակտերով հաստատված չեն 25090.0 հազ. դրամ մնացորդը կամ 8.6 տոկոսը: Աուդիտն իրականացնող անձի կարծիքով ֆինանսական հաշվետվությունները, բացի վերը նշված հանգամանքներից, մնացած բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը՝ առ 31.12.2010թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքները, սեփական կապիտալում փոփոխություններն ու դրամական հոսքերը՝ Համաձայն ՀՀ հաշվապահական Հաշվառման Ստանդարտների (Աուդիտորական եզրակացության պատճենը կցվում է):

Ստորև ներկայացվում է ընկերության 2009թ. ֆինանսական վիճակի վերլուծությունը

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2010թ. տարեկան

Ա) Ֆինանսական կայունության ցուցանիշները ընկերությունում բնութագրվում են հետևյալ կերպ՝

1. Ֆինանսական անկախության գործակիցը կազմում է՝

01.01.2011 թ.	Սեփական կապիտալ	1371847	0.74
---------------	-----------------	---------	------

	Հաշվեկշռի հանրագումար	1844206	
--	-----------------------	---------	--

Այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը կազմում է 0,5:

2. Պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցության գործակից:

Այս գործակիցը ցույց է տալիս, թե սեփական կապիտալի միավորի հաշվով որքան պարտավորություններ ունի ընկերությունը, և որոշվում է հետևյալ բանաձևով`

01.01.2011	Պարտավորություններ	472359	0.34
------------	--------------------	--------	------

	Սեփական կապիտալ	1371847	
--	-----------------	---------	--

Այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը կազմում է 1:

3. Ինքնավարության գործակից:

Այս գործակիցը ցույց է տալիս, թե ընկերության միջոցների որ մասն է ձևավորվել երկարաժամկետ հիմունքներով ներգրավված աղբյուրների հաշվին, և որոշվում է`

Սեփական կապիտալ + Երկարաժամկետ պարտավորություններ

Հաշվեկշռի հանրագումար

01.01.2011 թ.	1371847 + 0	0.74
	844206	

4. Գործող կապիտալ:

Այն ցույց է տալիս, թե ընթացիկ ակտիվների որ մասն է ապահովված սեփական կապիտալով և երկարաժամկետ պարտավորություններով կամ երկարաժամկետ հիմունքներով ներգրավված միջոցների որ մասն է ուղղված ընթացիկ ակտիվների ֆինանսավորմանը: Այս գործակիցը որոշվում է հետևյալ բանաձևով`

Ընթացիկ ակտիվներ - կարճաժամկետ պարտավորություններ
կամ

Սեփական կապիտալ + Երկարաժամկետ պարտավորություններ - Ոչ
ընթացիկ ակտիվներ

Ընկերությունում այն կկազմի՝

01.01.2011 թ. - 1371847+ 0 - 326964 = 1044883

5. Ընթացիկ ակտիվների՝ գործող կապիտալով ապահովվածության գործակից:

Այս գործակիցը ցույց է տալիս, թե ընկերության ընթացիկ ակտիվների որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի և երկարաժամկետ պարտավորությունների հաշվին, և որոշվում է՝

Գործող կապիտալ

_____ հարաբերությամբ

Ընթացիկ ակտիվներ

1044883

01.01.2011

==

0.69

1517242

Այս ցուցանիշի ցանկալի նորմատիվային փոքրագույն մակարդակը կազմում է 0,1:

6. Պաշարների՝ գործող կապիտալով ապահովվածության գործակից:

Այս գործակիցը ցույց է տալիս, թե ընկերության ապրանքանյութական պաշարների որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի և երկարաժամկետ պարտավորությունների հաշվին, և որոշվում է՝

Գործող կապիտալ

_____ բանաձևով

Պաշարներ

1044883

01.01.2011

==

0.87

1202171

Այս ցուցանիշի նորմատիվային փոքրագույն արժեքը կազմում է 0,5:

7. Սեփական կապիտալի մանրայնության գործակից, որը ցույց է տալիս, թե սեփական կապիտալի հաշվին ձևավորված միջոցների որ մասն է գտնվում շարժունակ (մոբիլ) վիճակում, և որոշվում է՝

1044883

01.01.2011

0.76

1371847

Այս ցուցանիշի նորմատիվային փոքրագույն արժեքը կազմում է 0,5:

8. Գույքի ռեալ արժեքի գործակից:

Այս գործակիցը ցույց է տալիս, թե ընկերության ընդհանուր միջոցներում որքան մաս են կազմում արտադրության միջոցները: Այն որոշվում է ընկերության արտադրության միջոցների (հիմնական միջոցներ՝ մնացորդային արժեքով, ապրանքանյութական պաշարներ) և հաշվեկշռի հանրագումարի հարաբերակցությամբ՝

Ռեալ ակտիվներ

_____ բաճառված

Հաշվեկշռի հանրագումար

251948+1202171

01.01.2011 _____ — 0.79

1844206

Այս ցուցանիշի ընդունելի փոքրագույն մակարդակը կազմում է 0,5 և բնութագրում է ընկերության արտադրական պոտենցիալը՝ արտադրության միջոցներով ապահովվածության աստիճանը:

9. Հիմնական միջոցների մաշվածության գործակից:

Այն ցույց է տալիս հիմնական միջոցների մաշվածության աստիճանը և որոշվում է՝ հիմնական միջոցների մաշվածության և սկզբնական (վերագնահատված) արժեքի հարաբերությամբ՝

Հ / Մ-երի մաշվածություն

_____ **Հ / Մ-երի սկզբնական արժեք**

494505

01.01.2011 _____ — 0.66

746453

Բ) Ընկերության իրացվելիության ցուցանիշները բնութագրվում են հետևյալ կերպ՝

1. Ընթացիկ իրացվելիության գործակից:

Այն ցույց է տալիս ընկերության կարճաժամկետ պարտավորությունների՝ ընթացիկ ակտիվներով ապահովվածության աստիճանը և որոշվում է ընթացիկ ակտիվների և կարճաժամկետ պարտավորությունների հարաբերությամբ՝

1517242

01.01.2011 _____ — 3.21

472359

Այս ցուցանիշի սահմանային նվազագույն արժեքը կազմում է 2:

2. Արագ իրացվելիության գործակից:

Այս գործակիցը ցույց է տալիս կարճաժամկետ պարտավորությունների առավել իրացվելի ակտիվներով ապահովվածության աստիճանը և որոշվում է առավել իրացվելի ակտիվների (դրամական միջոցներ, կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ, դեբիտորական պարտք) և կարճաժամկետ պարտավորությունների հարաբերությամբ՝

$$01.01.2011 \quad \frac{315071}{472359} = 0.67$$

Այս ցուցանիշի սահմանային նվազագույն արժեքը կազմում է 1:

3. Բացարձակ իրացվելիության գործակից:

Այս գործակիցը ցույց է տալիս կարճաժամկետ պարտավորությունների՝ դրամական միջոցներով և դրանց համարժեքներով ապահովվածության աստիճանը և որոշվում է դրամական միջոցների ու կարճաժամկետ ֆինանսական ներդրումների և կարճաժամկետ պարտավորությունների հարաբերությամբ: Ընդ որում, այստեղ պետք է հաշվի առնվեն միայն այն ֆինանսական ներդրումները, որոնք ըստ էության համարժեք են դրամական միջոցներին:

Ընկերությունում բացարձակ իրացվելիության գործակիցը կկազմի՝

$$01.01.2011 \quad \frac{23326}{472359} = 0.05$$

Այս գործակցի ցանկալի արժեքն ընկած է 0,2 և 0,5 թվերի սահմաններում:

11. ՇԱՐՈՒԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՇԵՄ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՊԱՇԱՐ

Ընկերության շահութաբերության շեմի և ֆինանսական կայունության պաշարի որոշման համար անհրաժեշտ տվյալները վերցված են ընկերության «Ֆինանսական արդյունքների մասին» Ձև N:2 հաշվետվությունից.

Ջ/Ջ	Ցուցանիշներ	
1.	Իրացումից զուտ հասույթ	1460834
2.	Փոփոխումն ծախսեր	1072236
3.	Համախառն շահույթ	388598
4.	Սահմանային շահութաբերություն	0.266

5.	Հաստատուն ծախսեր	303470
6.	Արտադրանքի իրացումից շահույթ	85128
7.	Շահութաբերության շեմ	1140865
8.	Ֆինանսական կայունության պաշար	319969

Շահութաբերության շեմն իրենից ներկայացնում է ինքնաձախսածածկման կետը, այսինքն՝ իրացման այն ծավալը, որի դեպքում ընկերության հիմնական շահույթը հավասարվում է հաստատուն ծախսերի:

Ֆինանսական կայունության պաշարը կազմում է այն լրացուցիչ իրացման ծավալը, որի դեպքում ընկերությունն արդեն փոխհատուցում է իր հաստատուն ծախսերը և իրացման ամեն հաջորդ միավորի դիմաց ստանում է սահմանային շահույթին հավասար շահույթ:

12. ԱԿՏԻՎՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Շրջանառելիության ցուցանիշները ցույց են տալիս, թե ընկերության այս կամ այն ակտիվները քանի անգամ են շրջանառվել տարվա կամ վերլուծվող ժամանակաշրջանի ընթացքում:

Մասնավորապես շրջանառելիությունը բնութագրող ցուցանիշներն են.

1. Ակտիվների շրջանառելիության գործակիցը կազմում է՝

$$\frac{1460834}{1948821} = 0.75$$

2. Սեփական կապիտալի շրջանառելիության գործակիցը կազմում է՝

$$\frac{1460834}{1380019} = 1.06$$

Այս գործակցի մեծ արժեքը ակտիվների շրջանառելիության գործակցի համեմատ վկայում է ֆինանսական անկախության գործակցի փոքրացման և ֆինանսական կայունության անկման մասին:

3. Հիմնական միջոցների շրջանառելիության կամ ֆոնդահատույցի գործակիցը, որը բնութագրում է ընկերության հիմնական միջոցների շրջանառելիության արագությունը, որը հաշվետու ժամանակաշրջանում կազմում է՝

$$\frac{1460834}{255805} = 5.71$$

4. Ընթացիկ ակտիվների շրջանառելիության գործակիցը, որը բնութագրում է ընթացիկ ակտիվների շրջապտույտի արագությունը, կազմում է՝

$$\frac{1460834}{1618280} = 0.90$$

5. Գործող կապիտալի շրջանառելիության գործակիցը կազմում է՝

$$\frac{1460834}{1049478} = 1.39$$

6. Պատրաստի արտադրանքի շրջանառելիության գործակիցը կազմում է՝

$$\frac{1460834}{58037} = 25.17$$

Այս գործակցի աճը վկայում է ընկերության արտադրանքի նկատմամբ պահանջարկի աճի մասին: Այն օգտակար է հաշվարկել իրացվելիության վերլուծության ժամանակ գնահատելու համար պատրաստի արտադրանքի իրացվելիության աստիճանը:

7. Դեբիտորական պարտքի շրջանառելիության գործակիցը կազմում է՝

$$\frac{1460834}{389535} = 3.75$$

8. Կրեդիտորական պարտքի շրջանառելիության գործակիցը կազմում է՝

$$\frac{1460834}{125765} = 11.62$$

Այս ցուցանիշի աճը վկայում է ընկերության կողմից պարտքերի մարման արագության աճի մասին, իսկ իջեցումը՝ ապառիկով գնումների մասին:

9. Պաշարների շրջանառելիության գործակիցը, որը բնութագրում է ապրանքանյութական պաշարների շրջանառելիության արագությունը, 2011թ. կազմում է՝

$$\frac{1460834}{1153019} = 1.27$$

Ստորև ներկայացվում է Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ – ի կողմից 2010թ. ընթացքում հաշվարկված և պետ. բյուջե վճարված գումարները ըստ հարկատեսակների հազ. դրամ

h/h	Հարկատեսակ	Հաշվարկվել է	Վճարվել է
1	ԱԱՀ	71563.0	94386.0
2	Ակցիզային հարկ	80743.0	73100.0
3	Եկամտահարկ	29675.0	28960.0
4	Շահութահարկ	20080	17428.0
5	Գույքահարկ	1639.0	1620.0
6	Հողի հարկ	3372.0	3453.0
7	Բնապահպանական վճար	299.0	263.0
	Ընդամենը	207371.0	219210.0

Ընկերության ապագա գործունեության հիմնական սկզբունքները կայանում են նոր արտադրատեսակների, տեխնոլոգիաների ներդրման, հիմնական միջոցների՝ սարքավորումների արդիականացման, վերազինման, արտադրության ժամանակակից սկզբունքների մշակման, հունքի (խաղողի, գինեմյութի) սեփական բազայի ստեղծման մեջ: Հունքի սեփական բազայի ստեղծումը ենթադրում է հողատարածքների ձեռք բերում, կամ վարձակալություն, մշակում՝ հետագա բերք ստանալու պայմանով, որը կհանդիսանա որպես հունք: Այս սկզբունքների կիրառումը կխթանի ընկերության արտադրատեսակների միջազգային շուկա ընդլայնված ձևով մուտք գործելու գործնառնությունը, ինչպես նաև արտադրության անխափանությունը և անկախացմանը արտաքին գործոններից: Նշված գործունեության իրականացման համար մոտավորապես անհրաժեշտ է 2 – ից – 2.5 միլիոն եվրո: Արտադրության կարևոր նախապայմաններից մեկն է էժան, սակայն որոկյալ հունքի և օժանդակ նյութերի ձեռքբերումը, որը թույլ կտա ձևավորել ճկուն գնային քաղաքականություն, մրցակցային դաշտում ապահովել կայուն դիրք, սպառողին (ինչպես բիզնես այնպես էլ վերջնական) ներկայացնել որակյալ և մատչելի արտադրանք: Քանի որ ալկոհոլի արտադրության բնագավառում ընկերությունը բազմապրոֆիլ է, ուստի գտնվում է մշտական մրցակցության մեջ թե տեղական արտադրողների հետ, թե ներմուծող կազմակերպությունների հետ: Մրցակցային դաշտում ընկերությունն իրականացնում է բարեխիղճ և ողջամիտ քաղաքականություն և չի չարաշահում իր դիրքերը: Բիզնեսի զարգացման վրա էական ազդեցություն են ունենում ինչպես ներքին այնպես էլ արտաքին գործոնները: Ներքին գործոնների շարքին են դասվում պետության տնտեսական իրավիճակը, այն է դրամի արժեվորումը կամ արժեզրկումը, ներքին ապրանքաշրջանառությունը, սպառողի գնողունակությունը, տնտեսական զարգացման ընդհանուր մակարդակը, հարկային և մաքսային օրենսդրությունը, վարչարարությունը, մրցակցության հավասար պայմանների ապահովումը: Էական ազդեցություն ունեն նաև արտաքին գործոնները՝ այն է միջազգային տնտեսական իրավիճակը, արտաժույթների գնային տատանումները, առաքված արտադրանքի դիմաց գումարների ստացումը, որը անմիջական ազդեցություն է ունենում վերարտադրության կազմակերպման համար: Վերջինս ներկայումս բավականին ռիսկային է, քանի որ այն երկրները, որտեղ որ ընկերությունը ապրանքներ է առաքում ևս գտնվում են անկայուն

տնտեսական վիճակում, ուստի դժվարին խնդիր է դարձել վստահելի և վճարունակ գործընկեր գտնելը:

Վերջին տարիներին իրացման ծավալների անկում է նկատվում, ուստի Ընկերությունը, չնայած ռիսկայնությանը, չի սահմանափակվում իր արտադրանքը միայն հայկական շուկայում իրացնելով: Մշտապես ուսումնասիրվում են նոր շուկաներ մուտք գործելու հնարավորությունները, մասնավորապես ԱՊՀ և եվրոպական երկրներ, այդ երկրների սպառողներին Ընկերության արտադրանքը ներկայացնելու հիմնահարցերը:

2010թ. ընթացքում Ընկերությունը մի շարք կնքված պայմանագրերի շրջանակներում Բելոռուսի Հանրապետության մի քանի խոշոր ձեռնարկությունների հետ գործարքներ է իրականացրել: Ամբողջ տարվա ընթացքում Ընկերությունը ինչպես իր արտադրանքն է արտահանել այդ երկիր, մասնավորապես սեփական արտադրության կոնյակ և շամպայն, այնպես էլ այդ երկրի ձեռնարկություններից ներմուծել է որոշակի քանակությամբ ալկոհոլային խմիչքներ, մասնավորապես օղիներ: Ներկայումս համագործակցությունը բելոռուսական այդ ընկերությունների հետ ակտիվորեն շարունակվում է, մասնավորապես ընկերությունը ձգտում է մեծացնել իր արտադրանքի արտահանման ծավալները Բելոռուսի Հանրապետություն:

Բացի դրանից արտահանումներ են եղել Վրաստանի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն, աֆրիկյան մայրցամաք:

Մշտապես պլանավորվում են զարգացման հեռանկարները, քանի որ ներկա պահին Ընկերությունը աշխատում է իր հզորության մոտ 30 տոկոսի չափով: Մշակվում են արտադրության և սպառման օպտիմալ, ճկուն տարբերակներ, որոնք կկարողանան ապահովել բիզնեսի հնարավորինս կայուն զարգացում: Սպառման ծավալների ընդլայնման նպատակով Ընկերությունը ճկուն գնային քաղաքականություն է վարում իր արտադրանքն առաջարկելով ինչպես խոշոր իրացում ապահովող ցանցերին, այնպես էլ մանրածախ վաճառակետերին, միաժամանակ ապահովելով նրանց մեջ առողջ մրցակցություն: Ընկերությունը սկզբունքային է համարում իր արտադրության մեջ հիմնականում տեղական հումքի օգտագործումը: Մասնավորապես հիմնական հումք հանդիսացող խաղողը ձեռք է բերվում հայաստանյան խաղողագործական շրջաններից՝ այն է Տավուշի, Արմավիրի, Կոտայքի մարզերից, որտեղից և ստացվում է գինեմյուսը: Տարաները՝ շշերն ու արկղերը, ինչպես նաև պիտակները նույնպես ձեռք են բերվում հիմնականում տեղական արտադրողներից: Մնացած այլ օժանդակ նյութերը, որքանով որ այն հնարավոր է թե տնտեսական, թե որակական և այլ առումներով նույնպես ձեռք են բերվում տեղական արտադրողներից:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է Բաժնետերերի ընդհանուր ժողովը: Ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում բոլոր այն հարցերը, որոնք «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն վերապահված են միայն ժողովին:

Ընկերության դիտորդ խորհուրդը իրականացնում է ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք հանդիսանում են ընկերության ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը: Ընկերության դիտորդ խորհրդի անդամներն են.

Բաժնետոմսերի քանակը %

1. Վերսանդիկ Հակոբյանը	39.0326%
2. Հրայր Հակոբյանը	38.9327 %
3. Բախչազյուլ Մկրտչյանը	-
4. Տիգրան Բեգոյանը	0.2137 %
5. Լենա Սիմոնյանը	-
6. Մարտին Այվազյանը	0.1566 %
7. Անահիտ Բակունցը	0.3227%
8. Մանուկ Դուդուկչյանը	0.3875%
9. Հրանտ Թումաղայանը	0.1755%
10. Ֆելիքս Հայրապետյանը	0.0072%
11. Տիգրան Ռշտունին	0.0108%

Ընկերության գործադիր տնօրենն է Ֆիամետա Հակոբյանը, որը իրականացնում է ընկերության ընթացիկ կառավարումը: Նրա իրավունքները և պարտականությունները սահմանվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և ընկերության կանոնադրությամբ:

Կառավարմանը մասնակցող անձանցից ազգակցական կապի մեջ են Վերսանդիկ Հակոբյանը, Հրայր Հակոբյանը, Ֆիամետա Հակոբյանը (քույր և եղբայրներ են) և Բախչազյուլ Մկրտչյանը, որը հանդիսանում է Վերսանդ, Հրայր և Ֆիամետա Հակոբյանների մայրը:

Կառավարմանը մասնակցող անձանց և ընկերության միջև շահերի բախման դեպք տեղի չի ունեցել:

Ընկերության բաժնետերերի 2009թ տարեկան. ընդհանուր ժողովը տեղի է ունեցել 2010թ. հունիս ամսվա վերջին շաբաթ օրը(ըստ ընկերության կանոնադրության), 2010թ. համար դեռևս տարեկան ժողով չի հրավիրվել:

Ընկերության հետ փոխկապակցված անձիք, ընկերության սեփականատերերը:

Հրայր Ֆրանսիկի Հակոբյանը՝ խոշոր բաժնետեր և միաժամանակ հանդիսանում է ընկերության Դիտորդ Խորհրդի նախագահ

2.Վերսանդիկ Ֆրանսիկի Հակոբյանը՝ խոշոր բաժնետեր և միաժամանակ հանդիսանում է ընկերության Դիտորդ Խորհրդի անդամ

3. Ֆիամետա Ֆրանսիկի Հակոբյանը՝ ընկերության բաժնետեր է և միաժամանակ հանդիսանում է ընկերության Գործադիր տնօրեն:

Զեկույցը հրապարակեց

Երևանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ – ի

Գործադիր տնօրեն

Ֆիամետա Ֆրանսիկի Հակոբյան